ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

«09» 08 2018թ.
N 40-Ա

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«09» 08 2018թ.
N 194-Ա

ՀԱՄԱՏԵՂ ՀՐԱՄԱՆ

Կառավարական քաղաքային և միջքաղաքային հեռախոսակապի ծառայություններ մատուցելու մասին

Ազգային անվտանգության ծառայությունը և Հանրապետության նախագահի աշխատակազմը, ի կատարումն Կառավարության 2011թ. սեպտեմբերի 22-ի N1500-ՆԳ որոշման, ղեկավարվելով «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով և ՀՀ Կառավարության 2018թ. հունիսի 15-ի N706-Ն որոշմամբ հաստատված «Բյուջեների կատարման» կարգի 38-րդ կետի պահանջներով՝ Հանրապետության նախագահի աշխատակազմին կառավարական քաղաքային և միջքաղաքային հեռախոսակապով ապահովելու և սպասարկելու նպատակով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՆՔ

1. Ազգային անվտանգության ծառայությունը Հանրապետության նախագահի աշխատակազմին մատուցում է կառավարական քաղաքային և միջքաղաքային հեռախոսակապի ծառայություններ (այսուհետ՝ «Ծառայություններ»), իսկ Հանրապետության նախագահի աշխատակազմը վճարում է այդ Ծառայությունների դիմաց՝ սույն համատեղ հրամանով սահմանված կարգով:
2. Սույն համատեղ հրամանով նախատեսված պահանջները տարածվում են կողմերի միջև 2018թ. հունիսի 1-ից ծագած հարաբերությունների նկատմամբ:

3. ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է.

1) Ծառայությունների որակյալ, անխափան մատուցումը և սույն համատեղ հրամանով նախատեսված պարտավորությունների կատարումը,
2) Կապի միջոցների անխափան աշխատանքը և վնասվածքների ժամանակին վերացումը,
3) Հանրապետության նախագահի աշխատակազմում տեղադրված կապի միջոցների և բաժանորդային գծի անվտանգությունն ապահովող հատուկ միջոցառումներ՝ գաղտնի տեղեկատվության արտահոսքը կանխելու նպատակով,
4) Կառավարական կապի միջոցների տեղադրումը, վերատեղադրումը և ծառայությունների մատուցումն ու դրանց հետ կապված աշխատանքների կատարումը՝ Հանրապետության նախագահի աշխատակազմի կողմից վճարման պարտավորության մասին գրավոր հայտ ներկայացնելուց հետո,
5) Կառավարական քաղաքային և միջքաղաքային հեռախոսակապի անջատումը, եթե Հանրապետության նախագահի աշխատակազմը չի կատարում Ծառայությունների դիմաց բաժանորդային վճարումը՝ ըստ սույն համատեղ հրամանի 4-րդ կետի 4) ենթակետի:

4. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է.

1) Ազգային անվտանգության ծառայության կապի հանգույցից մինչև իր աշխատասենյակներն առանձին մալուխային գծի շարքից դուրս գալու դեպքում վերանորոգման աշխատանքների ծախսերը՝ ըստ կառավարական կապի միջոցների շահագործման հատուկ պահանջների,
2) Կառավարական կապի միջոցների շահագործման հատուկ պահանջների կատարումը և այն աշխատասենյակների պահպանումը, որտեղ տեղադրված են այդ միջոցները,
3) Իր մոտ տեղադրված կապի միջոցների պահպանումը,

№	Տեղադրման վայրը	Կառավարական քաղաքային կապ	Ընդամենը
1.	Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավար	1 x 225 000	225 000
2.	Հանրապետության նախագահի աշխատակազմի արարողակարգի վարչության պետ	1 x 225 000	225 000
3.	կապի անվտանգությունն ապահովող հատուկ ծառայություններ	2x 100 000	200 000
	ընդամենը տարեկան վարձը		650 000
			Վեց հարյուր հիսուն հազար դրամ

4) Բաժանորդային վճարումների փոխանցումը Ազգային անվտանգության ծառայության հաշվարկային հաշվին՝ ոչ ուշ, քան եռամսյակը մեկ: Վճարումները կատարվում են ՀՀ դրամով,
5) Իր մոտ տեղադրված հատուկ կապի միջոցների վերադարձը Ազգային անվտանգության ծառայությանը՝ տեխնիկապես սարքին վիճակում՝ Ծառայության մատուցումների վերջնական դադարեցումից անմիջապես հետո,
6) Ազգային անվտանգության ծառայությանը պատկանող կապի միջոցների արժեքի փոխհատուցումը՝ ըստ կազմված համապատասխան ակտի, եթե դրանք կորստի են մատնվել իր մեղքով:

5. Ուժը կորցրած ճանաչել Ազգային անվտանգության ծառայության և Հանրապետության նախագահի աշխատակազմի 2017թ. նոյեմբերի 1-ի «Կառավարական քաղաքային և միջքաղաքային հեռախոսակապի ծառայություններ մատուցելու մասին» N52-Ա համատեղ հրամանը:

Ազգային անվտանգության ծառայության տնօրեն

_____ **Ա. Վանեցյան**

ք. Երևան, Նալբանդյան 104
ՀՀ Ֆին. նախ. գործառնական վարչության
համայնքների և պետական հիմնարկների
բյուջեների հաշվառման բաժին
h/h 90001830101
հվhh 01507079

Կ.Տ.

Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար

_____ **Է. Տարասյան**

ք. Երևան, Մաշտոցի պողոտա 47
ՀՀ Ֆին. նախ. գործառնական վարչության
համայնքների և պետական հիմնարկների
բյուջեների հաշվառման բաժին
h/h 900011204089
հվhh 00006505

Կ.Տ.

Կառավարական կապի և տեղեկատվության վարչություն _____հեռախոս՝ 1-99

ՀՀ ազգային անվտանգության ծառայություն
Կառավարական կապի և տեղեկատվության վարչություն
Ելից № 12/2100 0908/8 թ.